ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ԲԴԽ-2-Ո-2
2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԵՎ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 89-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետով, 94-րդ հոդվածի 1-ին մասով, Կառավարության 2018 թվականի հունիսի 15-ի թիվ 706-Ն որոշման հավելվածի 9-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով Կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 2121-Ն որոշումը՝ Բարձրագույն դատական խորհուրդը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է

1. Հաստատել՝

1) Հայաստանի Հանրապետության բարձրագույն դատական խորհրդի աշխատակազմ՝ Դատական դեպարտամենտի 2022 թվականի ծախսերի նախահաշիվները՝ համաձայն հավելված 1-ի, հավելված 2-ի, հավելված 3-ի և հավելված 4-ի.

2) Վճռաբեկ դատարանի 2022 թվականի ծախսերի նախահաշիվը՝ համաձայն հավելված 5-ի.

3) Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 2022 թվականի ծախսերի նախահաշիվը՝ համաձայն հավելված 6-ի.

4) Վերաքննիչ քրեական դատարանի 2022 թվականի ծախսերի նախահաշիվը՝ համաձայն հավելված 7-ի.

5) Վերաքննիչ վարչական դատարանի 2022 թվականի ծախսերի նախահաշիվը՝ համաձայն հավելված 8-ի.

6) Վարչական դատարանի 2022 թվականի ծախսերի նախահաշիվը՝ համաձայն հավելված 9-ի.

7) Սնանկության դատարանի 2022 թվականի ծախսերի նախահաշիվը՝ համաձայն հավելված 10-ի.

8) Հակակոռուպցիոն դատարանի 2022 թվականի ծախսերի նախահաշիվը՝ համաձայն հավելված 11-ի.

9) Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 2022 թվականի ծախսերի նախահաշիվը՝ համաձայն հավելված 12-ի.

10) Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 2022 թվականի ծախսերի նախահաշիվը՝ համաձայն հավելված 13-ի.

11) Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 2022 թվականի ծախսերի նախահաշիվը՝ համաձայն հավելված 14-ի.

12) Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 2022 թվականի ծախսերի նախահաշիվը՝ համաձայն հավելված 15-ի.

13) Արագածոտնի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 2022 թվականի ծախսերի նախահաշիվը՝ համաձայն հավելված 16-ի.

14) Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 2022 թվականի ծախսերի նախահաշիվը՝ համաձայն հավելված 17-ի.

15) Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 2022 թվականի ծախսերի նախահաշիվը՝ համաձայն հավելված 18-ի.

16) Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 2022 թվականի ծախսերի նախահաշիվը՝ համաձայն հավելված 19-ի.

17) Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 2022 թվականի ծախսերի նախահաշիվը՝ համաձայն հավելված 20-ի.

18) Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 2022 թվականի ծախսերի նախահաշիվը՝ համաձայն հավելված 21-ի.

19) Դատական կարգադրիչների ծառայության 2022 թվականի ծախսերի նախահաշիվը՝ համաձայն հավելված 22-ի.

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ **Գ. ՋՀԱՆԳԻՐՅԱՆ**

2022թ. հունվարի 7
ք. Երևան